ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մայիսի 2021 թվականի N **105**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0134-0025 ԾԱԾԿԱԳՐԻ 4-ԻԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջան 2-րդ փողոց թիվ 9 հասցեի բնակիչ Սիրանուշ Սերոժի Մարտիրոսյանի լիազորված անձ Արշավիր Բալայանի 27.05.2021թ. Բ-241 դիմումը, ժողովրդական դեպուտատների Ստեփանավանի քաղխորհրդի գործկոմի նիստի 05.09.1989թ. թիվ 22 արձանագրության քաղվածքը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0134-0025 ծածկագրում գտնվող 655.5 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝
   ա/ Ստեփանավան համայնքի 06-007-0134-0025 ծածկագրի հողամասի մակերեսը 655.5 քմ
   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 655.5 քմ մակերեսով հողամասից 600.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սիրանուշ Սերոժի Մարտիրոսյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 55.5 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Սիրանուշ Սերոժի Մարտիրոսյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան համայնքի 06-007-0134-0025 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 90.4 քմ մակերեսով նկուղի, 4.4 քմ մակերեսով աստիճանավանդակի, 96.0 քմ մակերեսով բնակելի տան, 4.7 քմ մակերեսով բաց պատշգամբի, 1.7 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Սիրանուշ Սերոժի Մարտիրոսյանի սեփականության իրավունքը: Հողամասում առկա է 14.55 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինություն:
4. Վերը նշված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, 4-րդ միկրոշրջան Կորյուն փողոց թիվ 9 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» հունիսի 2021 թվականի N **106**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՆԻՍ ԹԱՂԱՄԱՍԻ 7 Փ. 18 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՍԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան Արմանիս թաղամաս 7-րդ փողոց 18 տան բնակիչ Սահակ Հովհաննիսյանի 03.05.2021թ. N Հ-191 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 09.04.2020թ. թիվ 22-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքից 40.0 հա 4-րդ կարգի արոտ 06-007-00619-0236 ծածկագրից վարձակալության իրավունքով տրամադրել Սահակ Հովհաննիսյանին համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:
2. Սահակ Հովհաննիսյանի հետ կնքել հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր 3 տարի ժամկետով, վարձավճարի չափ սահմանելով՝ տարեկան 110.400 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հունիսի 2021 թվականի N **107**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Նանսենի փողոց թիվ 1/1 հասցեի բնակիչ Վարսենիկ Ավետիսյանի 31.05.2021թ. թիվ Ա-247 դիմումը, Աշոտաբերդ թաղամաս թիվ 3/2 հասցեի բնակիչ Լենա Վարդանյանի 01.06.2021թ. Վ-249 դիմումը, Աշոտաբերդ թաղամաս թիվ 18/1 հասցեի բնակիչ Մարինե Այվազյանի 01.06.2021թ. թիվ Ա-250 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 02.06.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Ստեփանավան համայնքի բնակիչներ Վարսենիկ Ավետիսյանին, Մարինե Այվազյանին տրամադրել 15000-ական ՀՀ դրամ (տասնհինգ հազար) և Լենա Վարդանյանին 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հունիսի 2021 թվականի N 108

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 182Բ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԽԱՆՈՒԹԻ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Հարությունյանի կողմից ներկայացված 02.06.2021թ. թիվ Հ-252 դիմումը, 13.06.2006թ. տրված թիվ 2135819 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Մ. Բաղրամյան 182բ կիսակառույց խանութի հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Մ. Բաղրամյան 180/4 կիսակառույց խանութ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ